ԿՐԹԱԿԱՆ

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

## ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ



Դեկտեմբերի 7-ի կառավարության նիստին հաստատված օրենսդրական փոփոխությունները ապահովում են եվրոպական մակարդակի կրթության համակարգի ձեւավորում՝ Վրաստանի կրթական համակարգի բոլոր աստիճաններում:

Օրենսդրական փոփոխությունները նախատեսում են այն նշանակալից մարտահիրավերները, որոնք ժամանակակից զարգացած երկրների կրթական համակարգի օրակարգում են:

Ընդհանուր, մասնագիտական եւ բարձրագույն կրթության որակի զարգացման մասին օրենքում մտցվող փոփոխություններով ներդրվում ու զարգանում են մեխանիզմներ, որոնք եվրոպական կրթական համակարգում արդեն հաստատված եւ արդյունավետ են:

Վրաստանում ստացած կրթությունը կճանաչվի միջազգային մակարդակով: Երկրի կրթական հաստատություններում կպատրաստվեն մրցունակ, որակյալ մասնագետներ, որոնք հեշտությամբ կկարողանան գտնել իրենց տեղը՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկայում:

Հետեւաբար, փոփոխություններն իրավական հիմքեր են ստեղծում՝ հաստատելու վերանայված ազգային որակավորման շրջանակը եւ ուսման ոլորտների դասակարգումը: Նշյալ փաստաթղթերը սահմանում եւ օրինականացնում են այնպիսի արդյունավետ մեխանիզմներ, որոնք ապահովում են ինչպես ֆորմալ, այնպես էլ՝ ոչ ֆորմալ կրթական տարածքի արդիականացում եւ զարգացում: Իրավական հիմքերի ստեղծումը նպաստում է՝ մասնագիտական ու բարձրագույն կրթության միջեւ, այսօր առկա, այսպես կոչված, «կրթական փակուղու» վերացմանը: Վերանայված օրենսդրությունը, անձի համար ողջ կյանքի ընթացքում, ուսման հնարավորություն է ընձեռում:

Ապահովում է նաեւ Վրաստանի կրթական համակարգի մասին տեղեկատվության մատչելիություն, թափանցիկություն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով, որակավորումներ տրամադրող՝ որակի ապահովման համակարգի զարգացում եւ վստահելիություն, մասնագիտական կրթության կապի հաստատում բարձրագույնի հետ, ակադեմիական որակի տրամադրման նպատակների համար՝ մասնագիտական կրթության կրեդիտների ճանաչում:

## ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ



«Հազարամյակի մարտահիրավեր հիմնադրամ-Վրաստան»-ը՝ ԱՄՆ-ի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ ու Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության, Նորարարությունների ու տեխնոլոգիաների գործակալության համագործակցությամբ, իրականացնում է հազարամյակի նորարարության մրցույթ: Նախագծի նպատակն է՝ բարձրացնել միջնակարգ դպրոցի աշակերտների հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը բնական գիտությունների, տեխնոլոգիաների եւ ինժեներական ոլորտների նկատմամբ: Մրցույթը նպաստում է՝ երկրում նորարարության եւ տեխնոլոգիաների բնագավառի նոր ձեռքբերումներին: Հաղթող թիմը կմասնակցի ՆԱՍԱ-ի (Օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչություն) ուսումնական ծրագրին՝ Հյուստոնի տիեզերական կենտրոնում:

2017-2018 ուսումնական տարվա նորարարությունների մրցույթի մեկնարկը տրվեց նախորդ տարիների եզրափակիչ մրցույթների հաղթողների նորարարական նախագծերի ցուցահանդեսով: Միջոցառման մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին, Վրաստանում ԱՄՆ-ի դեսպան Յան Քելին, «Հազարամյակի մարտահիրավեր» հիմնադրամի գործադիր տնօրեն Մագդա Մաղրաձեն, Վրաստանի նորարարությունների եւ տեխնոլոգիաների գործակալության նախագահ Գիորգի Ջվիադաձեն:

- Ձեռնարկը երիտասարդների համար բացառիկ հնարավորություն է կատարելագործել, զարգացնել, նորարարական գաղափարներ ու գյուտեր, գիտելիքներ, փորձ փոխանակելու եւ ապագա համագործակցության նպատակով՝ կապվելու ինչպես գիտնականների, այնպես էլ գործարարների հետ: Հավատում եմ, որ ընթացիկ մրցույթը եւս կբացահայտի հետաքրքիր երիտասարդների: Հաջողություններ ու արդյունավետ աշխատանքային գործընթաց եմ մաղթում մասնակիցներին: Հաղթողների համար, Հյուստոնի կենտրոնում, ՆԱՍԱ-ի ուսումնական ծրագրին մասնակցությունը կդառնա կյանքի անմոռանալի փորձառություններից մեկը,-ասաց Միխեիլ Չխենկելին:

## ՆՈՐ ԾՐԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, մասնագիտական ու հանրակրթական հաստատությունների հետ համագործակցությամբ, իրականացնում է դպրոցականների աշխատանքային հմտությունների զարգացման ծրագիր: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին՝ փորձել տարբեր մասնագիտություններ, տիրապետել ու զարգացնել հիմնական հմտություններ: Համաձայն ծրագրի, կրթական հաստատությունները կարող են միավորվել եւ, համագործակցության ճանապարհով, աշակերտների դպրոցական կյանքը ավելի հետաքրքիր ու բազմազան դարձնել:

Թբիլիսիի թիվ 51 հանրային դպրոցում անցկացվող հագուստի մոդելավորման ու սննդի անվտանգության հարցերի շուրջ աշխատանքային հմտությունների դասընթացին ներկա գտնվեց եւ աշակերտների հետ զրուցեց Վրաստանի կրթության ու գիտության նախարարի առաջին տեղակալ Քեթեւան Նատրիաշվիլին:

Նախագիծը ծառայում է՝ դպրոցահասակ աշակերտների մեջ մասնագիտական ծրագրերի մասին տեղեկատվության ավելացմանը, մասնագիտական կրթության մասսայականացմանը: Ծրագրին մասնակցությունը կամավոր է, այս փուլում ընդգրկված են 7-9-րդ դասարանների սաներ: Աշակերտների աշխատանքային ունակությունների զարգացման դասընթացի իրականացման նպատակով՝ մրցույթի կարգով ընտրվել է 200 նախագիծ ու ներդրվել 138 դպրոցում: Համապատասխանաբար, 3306 աշակերտ ներգրավվել է աշխատանքային հմտությունների զարգացման դասերին/դասընթացներին:

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ



Վրաստանի կրթության ու գիտության նախարար Միխեիլ Չխենկելին հանդիպեց նախաձեռնող խմբին, որի կազմում էին հատուկ ուսուցիչներ, Հատուկ ուսուցիչների ասոցիացիայի ղեկավար ու ծնող: Հանդիպմանը խոսվեց ներառական կրթության առկա մարտահիրավերների, մասնավորապես, հատուկ ուսուցչի մասնագիտության զարգացման հարցերի շուրջ:

Նախարարը խմբի անդամներին ներկայացրեց ներառական կրթության զարգացման սեփական տեսլականը, որը հիմնված է ընդգրկվածության սկզբունքներով՝ յուրաքանչյուր աշակերտի անհատական կրթական կարիքներին համապատասխան կրթական միջավայր ստեղծելու վրա: Ապագա ծրագրերը ներառում են. հատուկ ուսուցչի մասնագիտության զարգացման աջակցություն, միջնակարգ կրթության հնարավորությունների ապահովում եւ կրթական կարիքներին հարմարեցված լրացուցիչ այլ ծառայությունների զարգացում:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ



Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելիի նախաձեռնությամբ անցկացվեց ընդլայնված հանդիպում՝ մանկական հոգեբանների ու կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Ոլորտի մասնագետները կարծիք հայտնեցին դպրոցներում բռնության կանխարգելման եւ ճգնաժամային իրավիճակների կառավարման վերաբերյալ: Նախանշվեց հետագա համագործակցության գործողությունների պլան: Որոշվեց, որ, բռնությունից զերծ ազատ դպրոցական միջավայրի զարգացման ու յուրաքանչյուր երեխայի անվտանգության ապահովման համար, է՛լ ավելի լավ համակարգված ու համաձայնեցված պետք է աշխատեն տարբեր կազմակերպություններ ու գերատեսչություններ:

Մասնագետներից բաղկացած խմբի համագործակցությունը նախարարության հետ պարբերական բնույթ կկրի: Մոտ ապագայում առաջին քայլերը կարվեն եւ դպրոցներում, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն միջոցառումներ:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Սահմանափակ կարողությունների հարցերով Վրաստանի կառավարության եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ երկխոսություն: Աշխատանքային հանդիպման նպատակն էր՝ տարբեր գերատեսչությունների ընդգրկվածությամբ բացահայտել այն բացթողումները, որոնք թույլ չեն տալիս սահմանափակ կարողություններով երեխաներին օգտվել սոցիալական ծառայություններից: Երկխոսությունը նաեւ ենթադրում է՝ տարբեր կոնկրետ առաջարկությունների մշակում ու հետագա քայլերի ձեռնարկում: Քննարկմանը մասնակցեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Լիա Գիգաուրին:

Ինչպես հայտնի է, Վրաստանը միացել է սահմանափակ կարողություններով անձանց վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիային եւ ստանձնել է հաշմանդամություն ունեցող անձանց/երեխաների հիմնական իրավունքների պաշտպանության պարտականություն, այդ թվում՝ կյանքի, առողջության, կրթության եւ սոցիալական իրավունքների:

Վրաստանի կառավարությունը, Կրթության ու գիտության նախարարությունը եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը հաջողությամբ համագործակցում են՝ Կոնվենցիայի իրականացման, սահմանափակ կարողությունների հետ կապված ազգային քաղաքականության ու ծրագրերի մշակման նպատակով:

## ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



«Հորիզոն 2020»-ի քաղաքականությանը աջակցելու մեխանիզմների շրջանակներում, Կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Ալեքսանդրե Թեւզաձեն հանդիպեց հետազոտությունների ու նորարարությունների ուղղությամբ աշխատող եվրոպացի բարձրակարգ փորձագետների հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին հարցեր, որոնք վերաբերում են Վրաստանում հեռանկարային հետազոտական ոլորտների նույնականացմանը, գիտության եւ արդյունաբերության համագործակցության ուժեղացմանն ուղղված քայլերի ձեռնարկմանը: Զրուցեցին նաեւ հետազոտական միավորների ֆինանսավորման համակարգի բարելավման նպատակով անցկացվող միջոցառումների շուրջ:

«Հորիզոն 2020»-ի քաղաքականությանը աջակցելու մեխանիզմը Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված նոր միջոց է, որի նպատակն է՝ ԵՄ-ի անդամ եւ «Հորիզոն 2020»-ի հարակից երկրներին գործնական օգնություն ցուցաբերել, որպեսզի նրանք ծրագրեն, իրականացնեն ու գնահատեն այն բարեփոխումները, որոնք կավելացնեն այդ երկրներում հետազոտությունների ու նորարարությունների ուղղությամբ ներդրումային ներուժը, կբարելավի հետազոտությունների ու նորարարությունների բնագավառի քաղաքականությունն ու համակարգի որակը:

*Էջը պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*
*Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

## ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆ` ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԱԼ ԸՆԿԱԼՈՒՄ



*Ասում են` սեփական ուժերի հնարավորության հստակ գիտակցումը կախված է ինքնագնահատման օբյեկտիվությունից: Որքանո՞վ է դա իրատեսական, եւ ինչպե՞ս կարելի է հասնել օբյեկտիվ ինքնագնահատականի:*

***Վ.Կարապետյան***

***Բաթումի***

Մարդուն հաճախ է հետաքրքրում, թե ի՞նչ են մտածում այլ մարդիկ իրեն մասին:

Սեփական եսի մասին ունեցած պատկերացման վրա ազդեցություն են թողնում ծնողների եւ այլ մարդկանց վերաբերմունքը: Հոգեբանական ուսումնասիրությունները հաստատում են, որ մանկուց անհրաժեշտ ջերմությամբ շրջապատված երեխան հակված է սեփական անձի մասին ավելի դրական պատկերացում ունենալուն: Իսկ եթե երեխան արհամարհված է եղել եւ, բացի կոպտությունից, ոչինչ չի տեսել, ապա նրա մեջ հենց մանկուց արմատանում է ցածր ու բացասական պատկերացումը սեփական անձի մասին:

Դպրոց մտնելու պահից ի վեր, ընկերները եւ ուսուցիչները դառնում են ինքնաճանաչման հիմնական գործոններից մեկը:

Դիտողությունները, որ արվում են ձեր հասցեին, եւ` վերաբերմունքը ձեր նկատմամբ, ամրացնում են ձեր կարծիքը սեփական անձի նկատմամբ: Երբ ուսուցիչը գովաբանում է լավ աշխատանքի համար, ձեւավորվում է լավ աշակերտ լինելու պատկերը: Նույն կերպ, եթե դասընկերներն արհամարհել են ձեզ ու չեն հրավիրել երեկույթի, սա կարող է է'լ ավելի իջեցնել առանց այդ էլ ցածր ինքնագնահատականը: Ձեր հասցեին մարդկանց ամեն ասածի եւ չասածի լույսի ներքո եք նայում ինքներդ ձեզ:

Տարիքային աճի հետ փոխվում է նաեւ ինքնագնահատականը, որը կարող է երբեմն անհանգստացնող լինել, բայց դա հասունանալու գործընթացի մի մասն է կազմում:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ «ԱՄԵՆԱԽՄՈՂ» ԵՐԿՐՆԵՐԸ



***Եվրամիության անդամների թվում Բալթյան երկրներն առաջատարն են դարձել ալկոհոլին բաժին ընկնող սպառողական ծախսերի ցուցանիշով:***

Այդ մասին հայտնել է Eurostat-ը: Վիճակագիրների հաշվարկների համաձայն, 2016 թվականին եվրոպացիներն ալկոհոլային խմիչքների վրա ծախսել են գրեթե 130 մլրդ եվրո, ինչը համարժեք է Եվրամիության ՀՆԱ-ի 0,9 տոկոսին: Սպառողական ծախսերի մեջ սպիրտային խմիչքների բաժինը Եվրոպայում միջին հաշվով հասել է 1,6 տոկոսի:

Պարզվել է, որ ամենից շատ ալկոհոլային խմիչքներ են սիրում Մերձբալթիկայում: Վարկանիշի առաջատարը դարձել է Էստոնիան, որտեղ, անցյալ տարվա ընթացքում, քաղաքացիների սպառողական ծախսերի 5,6 տոկոսը բաժին է ընկել սպիրտային խմիչքներին: Էստոնիային հաջորդում են Լատվիան ու Լիտվան, համապատասխանաբար` 4,8 եւ 4,2 տոկոս ցուցանիշներով:

Լեհաստանը եւ Չեխիան բաժանել են չորրորդ եւ հինգերորդ տեղերը. ոգելից խմիչքների վրա այս երկրների բնակիչների ծախսերի բաժինը հասնում է 3,6 տոկոսի: Եվրոպայում ալկոհոլի վրա ամենաքիչը` սպառողական բոլոր ծախսերի 0,9 տոկոսը, ծախսում են իսպանացիները:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ԱՐԱԳ ՍՆՈՒՆԴԸ ԵՎ ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղեստամոքսային զանազան հիվանդությունների եւ նույնիսկ քաղցկեղի առաջացման հավանական պատճառներից մեկը` արագ սնունդը կլանելու իրողությունն է, երբ ուտում ենք առանց լավ ծամելու եւ առանց դադարներ տալու: Արդյունքում` ստամոքսում կուտակվում են կերակրի խոշոր պատառներ, որոնք դժվար է մարսել: Սակայն, խնդիրը միայն արագ ուտելը չէ: Աղեստամոքսային հիվանդություններ ստանալու վտանգն ավելի է մեծանում` հաճախորդներով լեցուն խորտկարաններում, աղմուկի եւ բարձր երաժշտության ներքո ուտելու դեպքում: Նույնը վերաբերում է նաեւ ուտելու ընթացքում ականջակալներով բարձր երաժշտություն լսող երեխաներին ու դեռահասներին, որոնց օրգանիզմն ավելի զգայուն է արձագանքում նման վնասակար ազդակներին:

Արագ սնունդը բացասական ազդեցություն է ունենում նաեւ մաշկի եւ մազերի որակի վրա, խաթարում է օրգանիզմի նյութափոխանակությունը, խախտում` օրգանիզմում առկա սպիտակուցների, ճարպերի եւ ածխաջրերի միջեւ հավասարակշռությունը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՕՐԳԱՆԻԶՄԻ ՏԱԳՆԱՊԸ

*Մարդու օրգանիզմը զարմանալի կերպով է կառուցված: Մեր օրգանիզմում միաժամանակ տեղի են ունենում աննկարագրելի քանակի գործընթացներ: Եվ եթե խափանում է տեղի ունենում, մենք պարտադիր ինչ-որ անսովոր բան ենք զգում: Սակայն, մեզանից շատերը դա անուշադրության են մատնում: Իրականում, միշտ ավելի լավ եւ ավելի հեշտ է խնդիրը վերացնել հենց սկզբից, քան հետագայում պայքարել տարբեր բարդությունների դեմ: Ի՞նչ են նշանակում մեր օրգանիզմի նշանները:*

**1.Մաշկի չորություն:** Օրգանիզմը վիտամին E-ի պակաս ունի: Այս վիտամինի պաշար կուտակելու համար, սննդակարգում պետք է ներառել ընկույզ, յուղոտ ձուկ եւ բուսական յուղեր:

**2.Մազերի եւ եղունգների թուլություն:** Այս նշանները խոսում են B խմբի վիտամինների եւ կալցիումի պակասի մասին: Դրանք մեծ քանակով պարունակում են հացահատիկները, հացահատիկային շիլաները:



**3.Լնդերի արյունահոսություն:** Օրգանիզմը վիտամին C-ի պակաս ունի: Այս վիտամինը պարունակում են սոխը, սխտորը, մրգերն ու բանջարեղենը: Կարելի է նաեւ մասուրի կամ սոճու տերեւների եփուկ խմել:

**4.Վատ քուն եւ դյուրագրգռություն:** Այս նշանները խոսում են մագնեզիումի եւ կալիումի պակասի մասին: Այս միկրոտարրերը պարունակվում են ծիրանի չրի, սեւ սալորի, բազուկի, դեղձից պատրաստված թթու լավաշի մեջ:

**5.Ջղաձգումներ` գիշերվա ընթացքում:** Սա նույնպես խոսում է մագնեզիումի եւ կալիումի անբավարարության մասին:

**6.Թեփոտ, չոր մաշկ` արմունկի հատվածում:** Սա վիտամին A-ի եւ C-ի անբավարարության հստակ նշան է: Այս վիտամինները պարունակվում են նարնջագույն բոլոր մրգերի եւ բանջարեղենի մեջ` գազար, դդում, լոլիկ, դեղձ, ծիրանի չիր:

**7.Աղի ուտելու ցանկություն:** Օրգանիզմում վարակ կա, կամ սրվել են բորբոքային պրոցեսները:

**8.Քաղցր ուտելու ցանկություն:** Կարող է խոսել գաստրիտների կամ լյարդի հետ կապված խնդիրների առկայության մասին:

**9.Ոչ աղի եւ ոչ քաղցր բան ուտելու ցանկություն:** Այս նշանը եւս կարող է խոսել լյարդի հետ կապված խնդրի առկայության մասին: Այսպիսի մթերքը կարող է օգնել հանգստացնելու սպազմն ու որովայնը:

**10.Ուտելիքն անալի է թվում:** Հնարավոր է, որ ձեզ մոտ դեպրեսիա է:

**11.Ուզում եք արեւածաղիկ չրթել:** Օրգանիզմին չի բավարարում հակաօքսիդանտների քանակը:

**12.Թթու ուտելու ցանկություն:** Օրգանիզմն ինքն է պահանջում այդպիսի մթերքներ, քանի որ նրան լյարդի եւ լեղապարկի գործունեության խթան է անհրաժեշտ:

**13.Դառը ուտելու ցանկություն:** Կարող է խոսել աղեստամոքսային տրակտի խնդիրների մասին:

ԴԻՄԱՀԱՐԴԱՐՈՒՄ

## ԿՈՍՄԵՏԻԿԱՅԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԻՐԸ

Կանանց կոսմետիկայի ամենագլխավոր եւ ամենաօգտակար առարկա համարվում է նրբունելին (պինցետ): Այդ մասին հայտնել է The Independent-ը:

Նշվում է, որ նրբունելին օգտակար կլինի ոչ միայն դեմքի անցանկալի մազերը հեռացնելու, այլեւ թարթիչները տարանջատելու եւ մաշկից մանր բեկորները հեռացնելու համար:

Ընդամենը դիմահարդարման համար ամենակարեւոր աքսեսուարների եւ գործիքների ցուցակում տեղ է գտել հինգ իր: Օգտակարության առումով, երկրորդ տեղում է` թարթիչների հարդարման ունելին: Փորձագետների խոսքով, հարմարանքը կօգնի բավարարվել առանց կոսմետիկայի, թարթիչներն ավելի երկար դարձնել եւ «լավ բանալ հայացքը»: Ունելին ստացել է հոնքերի համար նախատեսված հարմարանքը, որի մի ծայրում վրձին է, իսկ մյուսում` փոքրիկ խոզանակ: Գործիքը շատ հարմար է` արագորեն ուղղել հոնքերը եւ ցանկացած վայրում սանրել:

Բացի այդ, հնգյակում տեղ են գտել տոնային միջոցները` քսելու սպոնժը եւ սանրը, որոնք, մասնագետների կարծիքով, արագորեն կօգնեն կարգի բերել մաշկն ու մազերը:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Հաղթում է այն կողմը, որը վստահ է ոչ թե իր սպառազեն բռունցքի, այլ իր ներազեն ոգու գերազանցության մեջ:

***ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ***
***(1886-1955)***
***Հայ ռազմական գործիչ***

Երբ տարիքի ծանր բեռից կռանում ենք եւ աղեղվում, ծանրալի ենք դառնում արդեն, եւ բոլորն են մեզնից նեղվում:

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՎՃԱՎԱՁԵ***
***(1786-1846)***
***Վրաց բանաստեղծ***

Մարդ ինչքան քիչ է գոհ իրենից, այնքան ավելի հարկավոր է նա ուրիշներին եւ ավելի շատ է օգտակար նրանց:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***(1828-1910)***
***Ռուս գրող***

Առանց ողջամտության խիզախությունը` սոսկ վախկոտության հատուկ տեսակ է:

***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա.4-65)***

Գինի խմելը նույնքան վնասակար է, որքան թույն ընդունելը:

***ՀԻՊՈԿՐԱՏ***
***(մ.թ.ա. 460-մ.թ.ա. 377)***
***Անտիկ հույն բժիշկ, փիլիսոփա***

Երբ այսօր հպարտանալու բան չկա, հպարտանում են երեկվա ծառայություններով:

***Մ.ԱՎԱԳՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

☺ *- Պապ, ես ե՞րբ եմ էնքան մեծանալու, որ ուր ուզեմ ու երբ ուզեմ գնամ, առանց մամային ասելու:*

*- Է՜, տղա ջան, սկի ես էդքան չեմ մեծացել...*

☺ *Վանաձորցի Մաշիսը Սպիտակում իր մեքենան բենզին էր լցնում: Լցնողին տասը դոլար է տալիս: Վերջինս դոլարը լապտերի տակ սկսում է շուռումուռ տալ: Մայիսն անհանգստանում է.*

*- Վախիլ մի, գիշերն եմ տպել:*

*- Վախըմ չեմ, համա ընենց շան տղա կա, հետեւի մասը տպըմ չի...*

☺ *Երկու ծեր կին խոսում են.*

*- Դու ինչի՞ քո բոստանում խրտվիլակ չես դնում:*

*- Ինչի՞, դե', ես ընենց էլ ամբողջ օրը բոստանում եմ, էլի...*

☺ *Հիվանդը գալիս է բժշկի մոտ.*

*- Բժի'շկ, ես հիշողության կորուստներ եմ ունենում:*

*- Եվ հաճա՞խ են այդպիսի կորուստներ լինում:*

*- Ինչպիսի՞ կորուստներ...*

*- Հիշողության...*

*- Ի՞նչ հիշողություն...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ԿՍԿՍՎԻ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՎԻԶԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, «Արմենիա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, անդրադառնալով Եվրամիության հետ վիզաների ազատականացման հարցերին, մասնավորապես նշել է.*



- Ես կարծում եմ, որ հաջորդ տարվա առաջին կեսին կամ մինչեւ այդ, թեեւ անշնորհակալ գործ է որեւէ ժամկետի վերաբերյալ հայտարարություն անելը, բայց կարծում եմ, որ այդ ժամանակահատվածում մենք կսկսենք երկխոսությունը: Այնտեղ եւս բազմաթիվ խնդիրներ կան, դա տեւական պրոցես է: Եթե լավ աշխատենք, կարծում եմ, 2-3 տարվա ընթացքում կարող ենք հասնել վերջնանպատակին:

Սերժ Սարգսյանը նշել է, որ նոր համաձայնագիրն առանձին գործընթաց է, իսկ մուտքի արտոնագրի ազատականացումն այլ գործընթաց է: Նրա խոսքով, իհարկե, դրանք, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են միմյանցով, բայց ստորագրել նոր համաձայնագիր դա չի նշանակում, որ ինքնին սկսվեց մուտքի արտոնագրերի ազատականացման գործընթացը:

Նա անդրադարձել է նաեւ Եվրամիության հետ գործող GSP+ համակարգի, ինչպես նաեւ՝ նույն կառույցի հետ ստորագրած Համապարփակ եւ ընդլայնված համագործակցության համաձայնագրի հնարավորություններին, նաեւ՝ այն դիտարկմանը, թե GSP+ համակարգից քչերն են օգտվում:

- Նախ՝ չէի ասի, որ շատ քչերն են օգտվում: Մեր արտահանումների 40 տոկոսը հենց այդ համակարգի ներքո է կատարվում: Այո, ապրանքատեսակները շատ են, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, 6200 ապրանքատեսակների գծով մենք Եվրամիությունում ունենք արտոնյալ պայմաններ, այսինքն՝ դրանք մաքսազերծվում են կամ 0-ական դրույքաչափով, կամ էապես ցածր դրույքաչափով: Իհարկե, համաձայնագիրն ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծում, բայց կարեւորն ապրանք արտադրելն է: Մենք պետք է կարողանանք շատ ու որակյալ մրցունակ ապրանք արտադրել, եւ այն ժամանակ արտահանողների համար որեւէ խոչընդոտ չի լինի,- ասել է նախագահը:

## ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄՆ Է



*Հայաստանի կառավարության գործունեությունն ուղղված է աղքատության մակարդակի նվազեցմանը: Այդ մասին լրագրողների հետ զրույցում նշել է Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը՝ ավելացնելով, որ աղքատության ցուցանիշները, իհարկե, անհանգստացնում են:*

- Դուք հաստատ տեսնելու եք՝ ինչպես ենք այդ ցուցանիշը կառավարելու եւ նվազեցնելու՝ մեր ամբողջ գործունեությամբ, կառավարության ամբողջ գործունեությունը դրան է ուղղված,- ասել է Կարեն Կարապետյանը:

Հայաստանի վարչապետի խոսքով, կառավարության գործունեության հաշվետվությունն ունի ձեւ, ինչպես ամբողջ աշխարհի կառավարությունների: «Բոլորը նույն կերպ են ներկայացնում, թե որքան է ՀՆԱ-ն, արտահանումը, ներմուծումը, առեւտուրն աճել եւ այլն: Այս տարի մենք ավարտելու ենք շատ ավելի բարձր ցուցանիշներով, քան կանխատեսել ենք»,- ասաց նա, միաժամանակ հավելելով, որ այդ ամենը չի լուծում բոլոր խնդիրները: «Լուծո՞ւմ է արդյոք այդ ցուցանիշը մեր բոլոր խնդիրները՝ ո՛չ: Եթե նույնիսկ դրանից կրկնապատիկ անգամ ավելի ցուցանիշ արձանագրենք, բոլոր խնդիրները չեն լուծվում: Երկիր գոյություն չունի, որ ամենաբարձր աճի տեմպերով էլ գնա՝ բոլոր խնդիրները լուծվեն»,- նկատել է գործադիրի ղեկավարը:

## ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻՆ




*Վիեննայում, ԵԱՀԿ արտգործնախարարների 24-րդ խորհրդի շրջանակներում, Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերին:*

Հանդիպմանը քննարկվեցին ԵԱՀԿ շրջանակներում Հայաստանի ներգրավվածությանը, տարբեր հարթություններում առկա համագործակցությանն առնչվող հարցեր:

Էդվարդ Նալբանդյանը Թոմաս Գրեմինգերին ներկայացրեց ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելուն ուղղված՝ Հայաստանի ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ջանքերը, անդրադարձավ երկու օր առաջ՝ Մինսկի խմբի համանախագահների եւ Ադրբեջանի ԱԳ նախարարի հետ ունեցած հանդիպումներին:

Վիեննայում կայացավ նաեւ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ:

Հանդիպմանն արտգործնախարարները քննարկեցին Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերությունների օրակարգային հարցեր, անդրադարձան երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռքբերված պայմանավորվածությունների կատարման ընթացքին: Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարները մտքեր փոխանակեցին ԵԱՀԿ գործունեության տարբեր ուղղությունների շուրջ:

Էդվարդ Նալբանդյանը եւ Սերգեյ Լավրովն անդրադարձան ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ




*Տնտեսական ակտիվության ցուցանիշի կուտակային աճերը, 2017 թվականի հոկտեմբերի դրությամբ, յուրաքանչյուր ամիս գերազանցել են նախորդ տարվա համանման ցուցանիշները՝ բացառությամբ հունվար-ապրիլի:*

Այսինքն՝ տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպերն առավել բարձր են եղել նախորդ տարվա համեմատ: Այս են վկայում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները: Մասնավորապես, տնտեսական ակտիվությունը, 2017-ի տասն ամիսներին 2016-ի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 7 տոկոսով, այն դեպքում, երբ 2016-ի ցուցանիշը 0,5 տոկոս էր: 2015-ի հունվար-հոկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը, նախորդ տարվա համեմատ, աճել էր 3,6 տոկոսով, իսկ 2014-ի աճը կազմել էր 4,8 տոկոս:

2017-ի տասն ամիսներին, նախորդ տարվա համեմատ, արդյունաբերական արտադրանքի ծավալի 12,4 տոկոսանոց աճ է գրանցվել: Համապատասխանաբար, 2016-ին այս ցուցանիշը կազմել է 6,5, 2015-ին՝ 4,6, 2014-ին՝ 2,2 տոկոս: Ինչպես վկայում են թվերը, այս ցուցանիշով եւս արձանագրվել է կայուն աճ՝ նախորդ չորս տարիների դրությամբ:

Ինչ վերաբերում է ծառայությունների ծավալին, ապա, 2014-ի հունվար-հոկտեմբերին գրանցվել է 7,2 տոկոսանոց աճ՝ նախորդ տարվա համեմատ: Մինչդեռ 2015-ին աճի ցուցանիշը անկում է ապրել՝ կազմելով 2,8 տոկոս: 2016-ի տասն ամիսներին ծառայությունների ծավալի աճը եղել է 7,7 տոկոս, 2017-ի ցուցանիշը գրեթե 2 անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝կազմելով 13,9 տոկոս:

Ներմուծման աճը 2017-ի տասն ամիսներին 24,1 տոկոս է, 2016-ին, նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 0,1 տոկոս:

Ինչ վերաբերում է արտահանման ծավալներին, ապա, 2017-ի տասն ամիսներին աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 19,4 տոկոս:

### ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության եւ «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության կողմից Դիլիջանում, դեկտեմբերի 8-9-ը, անցկացված՝ տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման մարմիններին նվիրված, խորհրդաժողովի ամփոփիչ նիստին: Օրակարգի շրջանակներում քննարկվել են Հայաստանի տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման խնդիրները, անդրադարձ է կատարվել՝ մարզերում ու համայնքներում տնտեսական զարգացմանը միտված ծրագրերին, երկրում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների ընթացքին, համայնքների խոշորացման գործընթացին:*

*Սերժ Սարգսյանը խորհրդաժողովի ամփոփիչ նիստում հանդես է եկել ելույթով, պատասխանել՝ միջոցառման մասնակիցներին հետաքրքրող հարցերին:*

### ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԵՑ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հայաստանի կառավարությունը ներում է՝ պետական աջակցության ծրագրերի շրջանակում, 2011-2016թթ. աշնանային ցորենի՝ էլիտա ու առաջին վերարտադրության, գարնանային գարու, առվույտի, կորնգանի սերմացու եւ 2015-2016թթ. պարարտանյութեր ստացած ու բնական աղետներից (կարկտահարություն, ցրտահարություն, սելավ) տուժած հողօգտագործողների պարտքերը: Կուտակվել էր 642 մլն դրամի սերմնացուի եւ 165 մլն դրամի պարարտանյութի պարտք:*

### ԳՈՐԾՈՒՄ Է «ԼՈՒՅՍ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐԸ

*Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) եւ «Ucom» Հիմնադրամի համագործակցությամբ, արդեն երկրորդ տարին է, ինչ մարզերի բնակիչներն ակնաբուժական անվճար ծառայություններ են ստանում: Այս տարվա աշխատանքները մոտենում են ավարտին:*

*2017թ. ընթացքում, «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում, Կոտայքի, Գեղարքունիքի եւ Շիրակի մարզերում, 8.000-ից ավելի մարդ ակնային զննում է անցել, շուրջ 3.700-ը՝ խորացված հետազոտություն: Աչքի շարժական հիվանդանոցում, կատարվել է շուրջ 1.350 վիրահատություն եւ՝ 470 լազերային միջամտություն, պատրաստվել է բարձր դիոպտրիայի շուրջ 400 ակնոց: 2018թ. սկզբին ծրագիրը կշարունակվի Արագածոտնի մարզում:*

### ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԸ՝ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏՂԻ» ԴԱՓՆԵԿԻՐ



*Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, ԱՊՀ-ի երկրների մշակույթի, գիտության եւ կրթության այլ գործիչների թվում, դարձել է «Համագործակցության աստղի» դափնեկիր:*

*Պարգեւների հանձնման հանդիսավոր արարողությունը, դեկտեմբերի 11-ին, կայացավ ԱՊՀ-ի մասնակից պետությունների ստեղծագործական ու գիտական մտավորականության Մոսկվայում ընթացող համաժողովում: «Համագործակցության աստղ» մրցանակը 2009 թվականից, ավանդաբար, շնորհվում է՝ արվեստի, գիտության եւ կրթության բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար: Պարգեւի դրամական բաղադրիչը կազմում է 2 մլն ռուբլի:*

*Այս տարի, Տիգրան Մանսուրյանից բացի, դափնեկիրներ են դարձել բալետմայստեր Յուրի Գրիգորովիչը (Ռուսաստան), գրականագետ Իվան Սավերչենկոն (Բելառուս), թատերական ղեկավար Տոլեուբեկ Ալպիեւը (Ղազախստան), մաթեմատիկոս Ալթայ Բորուբաեւը (Ղրղզստան), կոմպոզիտոր Եվգենի Դոգան (Մոլդովա), դերասան Իբոդուլլո Մաշրաբը (Տաջիկստան) եւ ուրիշներ:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԴԵԿՏԵՄԲԵՐ



*18.12.2017. Սուրբ Հայրապետներ Իգնատիոսի, Ադդեի եւ Մարութա եպիսկոպոսի հիշատակության օր*

*21.12.2017. Տոն Սուրբ կույսերի՝ Ինդոսի, Դոմնայի, Գղերիկոս քահանայի եւ երկու բյուր նահատակների, որոնք այրվեցին Նիկոմիդացիների եկեղեցում*

*23.12.2017. Սուրբ Դավիթ մարգարեի եւ Հակոբոս Տյառնեղբայր առաքյալի հիշատակության օր*

## ԽԱՉՔԱՐԵՐԻ ՕԾՈՒՄ՝ ԴԻԼԻՍԿԱՅՈՒՄ

*Դեկտեմբերի 9-ին, Ախալքալաքիի մունիցիպալիտետի Դիլիսկա գյուղում, տեղի ունեցավ երկու խաչքարի օծում եւ եկեղեցու բացում: Սուրբ Սարգիս եկեղեցին այսուհետ եզակիներից է Ջավախեթիում, որ զարդարված է որմնանկարներով:*



Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ, Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդության հոգեւոր դասի ներկայությամբ, տեղի ունեցավ խաչքարերի օծման արարողությունը: Ընդամենը մեկ օր տարբերությամբ, ուղիղ 9 տարի առաջ, դեկտեմբերի 10-ին, Դիլիսկայի եկեղեցին վերաօծվել էր:

Ամենափրկիչ խաչքարը եկեղեցուն է նվիրել Սոս Մոսոյանը, ով նաեւ խաչքարի հեղինակն է: Այդ գործում իրենց ավանդը ներդրեցին նաեւ բարերարներ Վանիկ Մոսոյանը, Փիլոս Մանուկյանը եւ Նաիրի Նահատակյանը: Խաչքարերի օծման արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետնի վարչության եւ սակրեբուլոյի նախագահներ Յուրի Ունանյանը եւ Նաիրի Իրիցյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության եւ սակրեբուլոյի նախագահներ Անի Մոսոյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, տեղի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

## ՍՊՈՐՏ

### ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՌԵԿՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՔ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐԸ



ԱՄՆ-ում անցկացված ծանրամարտի աշխարհի առաջնությանը Վրաստանի հավաքականի անդամ **Լաշա Տալախաձեն,** 106 եւ ավելի կգ քաշային կարգում, սահմանելով երկու համաշխարհային ռեկորդ, եւ նվաճելով երեք ոսկե մեդալներ, երկրորդ անգամ արժանացավ մոլորակի ուժեղագույնի կոչման:



Աշխարհի առաջնությանը հաջող ելույթ ունեցավ նաեւ կանանց հավաքականի Վրաստանի եւս մեկ այլ ներկայացուցիչ: **Անաստասիա Գոտֆրիդը,** մրցաշարի 90 կգ քաշային կարգում, նվաճեց աշխարհի չեմպիոնուհու կոչումը:

Մրցաշարին մասնակից հայաստանցի մարզիկներն անհաջող ելույթ ունեցան, արդյունքում՝ չզբաղեցրին ոչ մի մրցանակային տեղ:

### ԿԱՅԱՑԱՎ ՖՈՒՏԲՈԼԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

FIFA WORLD CUP RUSSIA 2018

Մոսկվայի Կրեմլի պալատում կայացավ ֆուտբոլի աշխարհի առաջնության խմբային փուլի վիճակահանությունը, որի արդյունքում առաջնության մասնակից 32 թիմերը բաժանվեցին 8 խմբերի:

**A** խումբ՝ Ռուսաստան, Սաուդյան Արաբիա, Եգիպտոս, Ուրուգվայ

**B** խումբ՝ Պորտուգալիա, Իսպանիա, Մարոկկո, Իրան

**C** խումբ՝ Ֆրանսիա, Ավստրալիա, Պերու, Դանիա

**D** խումբ՝ Արգենտինա, Իսլանդիա, Խորվաթիա, Նիգերիա

**E** խումբ՝ Բրազիլիա, Շվեյցարիա, Կոստա-Ռիկա, Սերբիա

**F** խումբ՝ Գերմանիա, Մեքսիկա, Շվեդիա, Հարավային Կորեա

**G** խումբ՝ Բելգիա, Պանամա, Թունիս, Անգլիա

**H** խումբ՝ Լեհաստան, Սենեգալ, Կոլումբիա, Ճապոնիա:

Հիշեցնենք, որ աշխարհի 2018 թվականի 21-րդ առաջնությունը հունիսի 14-հուլիսի 15-ին կանցկացվի Ռուսաստանում: Խաղերը կանցկացվեն Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կազան, Սոչի, Եկատիրինբուրգ, Կրասնոդար, Սամարա, Յարոսլավլ, Դոնի-Ռոստով քաղաքներում:

### ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ ԽԱՂԱՐԿԵՑԻՆ ՄԵԴԱԼՆԵՐԸ



*Ախալքալաքիում ավարտվեց երեք օր տեւած շրջանի շախմատի դպրոցականների առաջնությունը:*

Մրցաշարն անցկացվում էր շվեյցարական մրցակարգով:

Տղաների պայքարում առաջին տեղը գրավեց Վլադիմիր Չախալյանը, երկրորդը՝ Դավիթ Չախալյանն էր, իսկ երրորդը՝ Վելիխան Գաբրիելյանը:

Աղջիկների մրցաշարում առաջին տեղը զբաղեցրեց Ասյա Գաբրիելյանը, երկրորդը՝ Սոնա Կարախանյանը, իսկ երրորդը՝ Հրանուշ Կարախանյանը:

Մինչեւ 12 տարեկանների չեմպիոնը, առաջնության ամենափոքր մասնակից, Արտյոմ Պարոնյանն էր: Երկրորդ եւ երրորդ տեղերը գրավեցին Սանասար Ռստակյանը եւ Արման Թոքմաջյանը:

Հաղթողները պարգեւատրվեցին պատվոգրերով ու նվերներով:

*ԱՐԹՈՒՐ ՄՈՍՈՅԱՆ*

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Պարտքի դիմաց պարտատիրոջը հանձնվող իր: 3.Քաղաք Ռուսաստանում: 7.Վիետնամի դրամական միավորը: 9.Հին կավե անոթ՝ հեղուկներ պահելու համար: 10.Թունավոր սարդ: 12.Վրացական մարզական թերթ: 13.Գետ Աբխազիայում: 14.Մարզումների բացվող գորգ: 17.Դասախոսություն բուհում: 19.Լայնատերեւ հյուսիսային ծառ: 21.Գետ ԱՄՆ-ում: 22.Երգեցիկ թռչուն: 24.Երկրաչափական մարմին: 26.Հնդկաստանի եւ Հնդկական անկախության շարժման քաղաքական եւ հոգեւոր առաջնորդ Մահաթմա ...: 29.Փշոտ բույս: 31.Անթեւ, գորշ, մազանման փետուրներով թռչուն: 32.Սենթ Քիթս եւ Նեւիսի մայրաքաղաքը: 33.Ֆրանսիայում եւ Բելգիայում վարչատարածքային միավոր: 35.Հայոց նահապետ, Հայքի թագավորության հիմնադիր արքան՝ մ.թ.ա. 1827- մ.թ.ա. 1769 թվականներին՝ ... Հայկազունի: 36.Վրացի գրող ... Ասաթիանի: 37.Հունական դիցաբանության մեջ աստվածների կողմից հավերժական տանջանքների դատապարտված թագավոր: 39.Անգլիացի կին գրող, դետեկտիվի վարպետ: 40.Ա.Դյումայի եռերգության հերոսներից: 41.Ադրբեջանի մայրաքաղաքը: 42.Ագարիկոն, շամպինյոն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բլուր՝ Երուսաղեմի մերձակայքում, որտեղ խաչել են Հիսուս Քրիստոսին: 2.Վրացի ֆուտբոլիստ ...Դարասելիա: 3.Ամբողջ տարվա, մեկ տարվա: 4.Ուտելիք, կեր: 5.Գերմանական ատրճանակ: 6.Վրաց դերասան ... Բարբաքաձե: 7.Իսպանացի գեղանկարիչ: 8.Գրականության երգիծական ժանր: 11.Կաթողիկոսի կողմից այլ երկրներ ուղարկվող հանձնակատար: 15.Տիկ՝ պարկապզուկ նվագող: 16.Կաթոլիկական պատարագ: 18.Տարածաշրջան Վրաստանում: 20.Փողային երաժշտական գործիք: 21.Հիմնարկի կամ կազմակերպության անունը կրող թերթիկ: 23.Պետություն Եվրոպայում: 24.Ութ երաժիշտներից կազմված խումբ: 25.Ֆրանսիացի մաթեմատիկոս եւ ֆիզիկոս, անալիտիկ երկրաչափության հիմունքների ստեղծողը: 26.Կապկի տեսակ: 27.Երկկճղակավոր կենդանի: 28.Գերմանական կայսրության կանցլեր Օտտո ֆոն ...: 30.Մանր դրամ, որ հավասար է ֆրանկի մեկ հարյուրերորդական մասին: 31.Հռոմեացի զորավար, եռապետ Մարկոս ...: 33.Կարծր վառելանյութ: 34.Կոճղարմատով ծաղկաբույս: 38.Ֆրանսիացի մարշալ, Նապոլեոնի զինակիցներից:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Շահնամե: 5.Մոնթե: 9.Աստ: 10.Նսեմ: 12.Տարի: 13.Ավիա: 15.Հրո: 16.Շարլ: 17.Լիա: 18.Նրա: 19.Որեն: 21.Վրեժ: 24.Եսայի: 26.Ան: 28.Որդի: 31.Անկապ: 32.Երբ: 34.Ափսոս: 36.Անտեր: 38.Ակ: 39.Ինն: 40.Ինգուշ: 43.Հունվար: 45.Խլաթ: 48.Գագրա: 49.Նվագ: 51.Բոշա: 52.Ես: 54.Վադուց: 55.Մախաթ: 58.Տիգրիս: 59.Եմ: 60.Լիլ: 61.Շերամ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Արտաշես: 3.Նանիր: 4.Եկմալյան: 5.Միրհավ: 6.Նատո: 7.Դարչո: 8.Մինաս: 11.Սալբի: 14.Վանա: 18.Նժդեհ: 20.Րե: 22.Րոպե: 25.Յասաման: 27.Նկարիչ: 29.Իր: 30.Մասիս: 31.Աստանա: 33.Բոկերիա: 35.Սանահին: 37.Դու: 41.Գիլգամեշ: 42.Շոթա: 44.Վեգաս: 45.Խաշ: 46.Ար: 47.Կրետե: 48.Գոցել: 50.Ավիկ: 51.Բու: 53.Սիմ: 56.Խոր: 57.Թեմ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445